

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2012թ. հոկտեմբերի 29-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 25-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

Օրակարգ.

1. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտագործնական գործունեության մասին (զեկ., ամբիոնի վարիչ, դոց. Ս. Մեղրյան):

2. Իրավագիտության ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցմամբ կուրսերում մագիստրոսական թեզերի պատրաստման վիճակի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):

3. Իրավագիտության ֆակուլտետում հեռակա ուսուցմամբ դասընթացների նախապատրաստման մասին (զեկ.՝ ղեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):

4. Իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցման ասպիրանտուրայի ընդունելության մասին:

5. Ուսումնական-առարկայական ծրագրերի վերանայման մասին:

6. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտագործնական գործունեության մասին (զեկ., ամբիոնի վարիչ, դոց. Ս. Մեղրյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ս. Դավթյանը, Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

2. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցմամբ կուրսերում մագիստրոսական թեզերի պատրաստման վիճակի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Ս. Դավթյանը, Տ. Բարսեղյանը, Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Վ.Քոչարյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հանձնարարել ամբիոններին հետամուտ լինել հատկապես հեռակա ուսուցմամբ մագիստրանտների թեզերի պատրաստման ընթացքին և առաջիկայում ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ ոչ պատշաճ վիճակում գտնվող աշխատանքների մասին:

3. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետում հեռակա ուսուցմամբ դասընթացների նախապատրաստման մասին (զեկ.՝ ղեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):

Հ. Խաչիկյանը նշեց, որ հեռակա ուսուցմամբ դասընթացները սկսվում են նեյմբերի 1-ից: Մախապատրաստման աշխատանքները բնականոն ընթացքում են: Եվս մեկ անգամ հիշատակվեց հեռակա ուսուցման կուրսերում դասընթացների պատշաճ

կազմակերպման և համապատասխան դասախոսների ներկայության ապահովման անհրաժեշտության մասին :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս.Մեղրյանը, Տ.Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հ. Խաչիկյանի հաղորդումն ընդունելի չիտություն :

4. ԼՄԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի հեռակա ուսուցման ասպիրանտուրայի ընդունելության մասին:

Հաշվի առնելով Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2011-2012թթ. շրջանավարտների՝ Ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորությունը ստանալու դիմումները, ինչպես նաև նրանց բարձր առաջադիմությունը և ասպիրանտուրայում ուսումը շարունակելու ցանկությունը՝ երաշխավորել նրանց մասնակցելու ասպիրանտուրայի ընդունելության քննություններին:

5. ԼՄԵՑԻՆ. Ուսումնական-առարկայական ծրագրերի վերանայման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս.Մեղրյանը, Տ.Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2012-2016թթ. հեռանկարային զարգացման հայեցակարգի պահանջները և այն, որ ներկայացված նախագիծը լրամշակման կարիք ունի, ուսումնական-առարկայական ծրագրերի վերանայման հարցին անդրադառնալ Իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի հաջորդ նիստին:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ. Դավթյան

